*Կ-489-12.01.2023-ՄԻ-011* *Երկրորդ ընթերցում*
*(Լրամշակված նախագիծ)*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-320-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 9-րդ կետ՝

«9) էլեկտրոնային հսկողություն՝ ռադիոալիքային, կենսաչափական, արբանյակային կամ **էլեկտրոնային** այլ միջոցներով հսկողություն անձի գտնվելու վայրի, տեղաշարժի եւ վարքագծի նկատմամբ։»։

***Հոդված 2.*** Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 11-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություններ՝

«Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված անհետաձգե- լի միջամտության որոշումների կատարումն ապահովելիս ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել էլեկտրոնային հսկողության միջոցներ։ Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման եւ ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանի վարման, տվյալներից օգտվելու կարգը սահմանում է Կառավարությունը»։

2) լրացնել նոր 11.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Էլեկտրոնային հսկողություն կիրառելիս պետք է նվազագույնի հասցվի անձանց անձնական և ընտանեկան կյանքի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը։ Էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշման կատարման ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքի։ Եթե էլեկտրոնային հսկողության միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տվյալները պահվում են մինչև իրավախախտման դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը։ Էլեկտրոնային հսկողության համակարգը պետք է ունենա օրենսդրությամբ սահմանված բավարար պաշտպանվածության մակարդակ։

***Հոդված 3.*** Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 9-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված պաշտպանական որոշումների կատարումը դատարանի որոշմամբ ոստիկանության կողմից կարող է իրականացվել նաև էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ»:

2) լրացնել նոր 9.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքի: Եթե էլեկտրոնային հսկողության միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տվյալները պահվում են մինչև իրավախախտման դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ պաշտպանական որոշումների կատարման ապահովման նկատմամբ տարածվում են սույն օրենքի 7-րդ հոդվածի 11.1-ին մասով նախատեսված կարգավորումները:»:

***Հոդված 4.*** Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «կարգին համապատասխան» բառերից հետո լրացնել «, բացառությամբ էլեկտրոնային հսկողության միջոցների» բառերը:

***Հոդված 5.*** Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված Կառավարության **որոշման** ուժի մեջ մտնելու օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված Կառավարության **որոշումը կընդունվի** օրենքի պաշտոնական հրապարակումից հետո վեցամսյա ժամկետում:

*~~Առաջին ընթերցում~~*

*~~Կ-489-12.01.2023-ՍԻ-011/1~~*

## <u>ՏԵՂԵԿԱՆՔ</u>

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
### ՕՐԵՆՔԸ

### «ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 2017 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-320-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 9-րդ կետ՝

«9) էլեկտրոնային հսկողություն՝ ռադիոալիքային, կենսաչափական, արբանյակային կամ էլեկտրոնային այլ միջոցներով հսկողություն անձի գտնվելու վայրի, տեղաշարժի եւ վարքագծի նկատմամբ:»:

***Հոդված 2.*** Օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունհոդվածում՝

1) 11-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություններ՝

«Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված անհետաձգելի միջամտության որոշումների կատարման նկատմամբ ոստիկանության կողմից իրականացվում է նաեւ էլեկտրոնային հսկողություն:կատարումն ապահովելիս ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել էլեկտրոնային հսկողության միջոցներ: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման եւ ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանի վարման, տվյալներից օգտվելու կարգը սահմանում է Կառավարությունը»:

Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման եւ ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

2) լրացնել նոր 11.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Էլեկտրոնային հսկողություն կիրառելիս պետք է նվազագույնի հասցվի անձանց անձնական և ընտանեկան կյանքի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը: Էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշման կատարման ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքի: Եթե էլեկտրոնային հսկողության միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տվյալները պահվում են մինչև իրավախախտման դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը: Էլեկտրոնային հսկողության համակարգը պետք է ունենա օրենսդրությամբ սահմանված բավարար պաշտպանվածության մակարդակ:

***Հոդված 3.*** Օրենքի 8-րդ հոդվածի հոդվածում՝

1) 9-րդ մասում լրացնել հետեւյալ հետևյալ բովանդակությամբ- նոր նախադասություն՝

«Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված պաշտպանական որոշումների կատարման նկատմամբ կատարումը դատարանի որոշմամբ ոստիկանության կողմից իրականացվում կարող է նաեւ իրականացվել նաև էլեկտրոնային հսկողություն:»: հսկողության միջոցների կիրառմամբ»:

2) լրացնել նոր 9.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքի: Եթե էլեկտրոնային հսկողության միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տվյալները պահվում են մինչև իրավախախտման դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ պաշտպանական որոշումների կատարման նկատմամբ ոստիկանության կողմից իրականացվում է նաև էլեկտրոնային հսկողություն:»: ապահովման նկատմամբ տարածվում են սույն օրենքի 7-րդ հոդվածի 11.1-ին մասով նախատեսված կարգավորումները:»:

~~***Հոդված 4.*** Սույն օրենքի 2-ին հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը կընդունվի սույն օրենքի ընդունումից հետո վեցամսյա ժամկետում:~~

***Հոդված 4.*** Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «կարգին համապատասխան» բառերից հետո լրացնել «, բացառությամբ էլեկտրոնային հսկողության միջոցների» բառերը:

***Հոդված 5.*** Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված Կառավարության որոշումների որոշման ուժի մեջ մտնելու օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված Կառավարության որոշումները որոշումը կընդունվեն—կընդունվի օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը հրապարակումից հետո վեցամսյա ժամկետում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-489-12.01.2023-ՄԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | **Կառավարություն** | **2-րդ հոդված** | Ներկայացնել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «***Հոդված 2.*** Օրենքի 7-րդ հոդվածում՝ 1) 11-րդ մասում լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր նախադասություններ՝ «Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված անհետաձգելի միջամտության որոշումների կատարումն ապահովելիս ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել էլեկտրոնային հսկողության միջոցներ: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման եւ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանի վարման, տվյալներից օգտվելու կարգը սահմանում է Կառավարությունը»:<br>2) լրացնել նոր 11.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.<br>«11.1. Էլեկտրոնային հսկողություն կիրառելիս պետք է նվազագույնի հասցվի անձանց անձնական և ընտանեկան կյանքի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը: Էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշման կատարման ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքի: Եթե էլեկտրոնային հսկողության միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տվյալները պահվում են մինչև իրավախախտման դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը:<br>Էլեկտրոնային հսկողության համակարգը պետք է ունենա օրենսդրությամբ  սահմանված բավարար պաշտպանվածության մակարդակ:»: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Փոփոխության արդյունքում կապահովվի բռնություն գործադրած անձի և բռնության ենթարկված անձանց անձնական տվյալների պաշտպանության գաղտնիությունը: Միաժամանակ, նախատեսվում է նաև վերոնշված խնդրի լուծմանը հասնելու նպատակով սահմանել նաև էլեկտրոնային հսկողության արդյունքների ոչնչացման համար իրավակարգավորումներ:<br><br>Միաժամանակ, նախագծով նախատեսվել է, որ անհետաձգելի միջամտության ու պաշտպանական որոշումների կատարման ապահովման նկատմամբ ոստիկանությունը կարող է հսկողություն իրականացնել նաև էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ: Պետք է նշել, որ էլեկտրոնային հսկողության միջոցները նախատեսվում են որպես վերոհիշյալ որոշումների կատարման նկատմամբ հսկողության միջոցներից մեկը: Ընդ որում, ոստիկանության կողմից էլեկտրոնային | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **հսկողության միջոցների կիրառման նկատմամբ հայցողական մոտեցումը սահմանափակելու նպատակով նախագծով սահմանված կառավարության որոշմամբ նախատեսվում է, ի թիվս այլնի, ամրագրել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման չափորոշիչները՝ նշված միջոցների խտրական կիրառումը բացառելու համար:** | | |
| 2. | ***Կառավարություն*** | **3-րդ հոդված** | Ներկայացնել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.<br><br>«***Հոդված 3.*** Օրենքի 8-րդ հոդվածում՝<br>1) 9-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝<br>«Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված պաշտպանական որոշումների կատարումը դատարանի որոշմամբ ոստիկանության կողմից կարող է իրականացվել նաև էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ»:<br><br>2) լրացնել նոր 9.1 մաս՝ հետևյալ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բովանդակությամբ.<br><br>«9.1. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված էլեկտրոնային հսկողության արդյունքում ստացված տվյալները ոչնչացվում են որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքի: Եթե էլեկտրոնային հսկողության միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տվյալները պահվում են մինչև իրավախախտման դեպքի քննության կամ ծառայողական քննության ավարտը: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ պաշտպա-նական որոշումների կատար ման ապահովման նկատմամբ տարածվում են սույն օրենքի 7-րդ հոդվածի 11.1-ին մասով նախատեսված կարգավորում-ները:»:<br><br>**Լրացման արդյունքում ոստիկանությանը հնարավորություն կտրվի էլեկտրոնային հսկողության միջոցների կրառել՝ Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումների վերաբերյալ պաշտպանական որոշումների կատարումն դատարանի** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **որոշմամբ:**<br><br>**Միաժամանակ, նախատեսվում է սահմանել էլեկտրոնային հսկողության արդյունքների ոչնչացման համար իրավակարգավորումներ:** | | |
| 3. | ***Կառավարություն*** | **4-րդ հոդված** | Ներկայացնել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.<br><br>***«Հոդված 4.*** Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «կարգին համապատասխան» բառերից հետո լրացնել «, բացառությամբ էլեկտրոնային հսկողության միջոցների» բառերը:»:<br><br>**Լրացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ ոստիկանությունն իրականացնում է հսկողություն ոստիկանության պետի սահմանած** | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **կարգով, մինչդեռ Նախագծով կատարվող լրացումների արդյունքում սահմանվում է, որ վերոնշյալ որոշումների կատարման նկատմամբ էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառումն իրականացվում է Կառավարության կողմից սահմանված կարգով:** | | |
| 4. | ***Կառավարություն*** | **5-րդ հոդված** | Ներկայացնել նոր խմբագրու-թյամբ՝ հետևյալ բովանդակութ-յամբ.<br><br>«***Հոդված 5***. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ<br><br>1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված Կառավարության որոշումների ուժի մեջ մտնելու օրը:<br>2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված Կառավարության որոշումները կընդունվեն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո վեցամսյա ժամկետում:»<br><br>**Հիմք է ընդունվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:** | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | **ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյան** | **1-ին հոդված** | **1.** Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով լրացվող 9-րդ կետում «ռադիոալիքային, կենսաչափական, արբանյակային կամ» բառերից հետո լրացնել «էլեկտրոնային» բառով: | 1. Ընդունվել է | 1. Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | **ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյան** | **5-րդ հոդված** | **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում «որոշումների» բառը փոխարինել «որոշման» բառով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում «որոշումները կընդունվեն» բառերը փոխարինել «որոշումը կընդունվի» բառերով:** | 1. Ընդունվել է: | 1. Ընդունվել է: |